UDC 37.013.42
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.015

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Աշիկյան Արմենուհի
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
armine_ashikian@yahoo.com
https://orcid.org/0000-0002-7172-6007

Ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության իրականացումը վերջին տասնամյակում զգալի բարելավումներ է ապրել, սակայն դրանք դեռևս թերի են և պահանջում են ճկուն լուծումներ ու կարգավորում: Երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանության ոլորտում կատարվել են կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, որոնք հանգեցրել են նոր սուբյեկտների ի հայտ գալուն, նրանց գործառույթների վերանայմանը, համագործակցության անհրաժեշտությանն ու այլ հարցերի: Ստեղծվել են սոցիալական միասնական ծառայություն ու դրա տարածքային կենտրոններ, որոնք կիրականացնեն ընտանիքի սոցիալական գնահատում, ինչը հաշվի կառնվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու կրթությունը կազմակերպելիս: Երեխայի սոցիալական պաշտպանության ու հիմնարար իրավունքների իրականացումը պետք է լինի պետության առաջնահերթություններից մեկը: Հետևաբար երկրում խաղաղության առաջնահերթության ու երեխայի կյանքի անվտանգության, սոցիալական բարեկեցության և երեխայի լավագույն շահերի ապահովումը պահանջում են կառավարության հստակ քաղաքականություն և սոցիալական ու իրավական նորմեր:

Բանալի բառեր՝ *երեխաների սոցիալական պաշտպանություն, օրենսդրական դաշտ, երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոններ, արտակարգ իրավիճակում հայտնված երեխա, զանգվածային տեղահանում, պարտադրված արտագաղթ, սոցիալական բարեկեցություն, կյանքի դժվարին իրավիճակ:*

Յուրաքանչյուր հասարակություն պետք է երեխաների համար ցանկանա այն, ինչ լավագույն և ամենախելամիտ ծնողն է ցանկանում իր երեխայի համար:
Ջ.Դյուի

Համառոտ ներածական: Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության իրացումն էական բարելավումներ է գրանցել վերջին տասնամյակում, սակայն դրանք դեռևս ոչ ամբողջական են և պահանջում են ճկուն լուծումներ ու կարգավորումներ: Կառուցվածքային ու բովանդակային փոփոխություններ են իրականացվել երեխայի սոցիալական և իրավական պաշտպանության ոլորտում, ինչը հանգեցրել է նոր դերակատարների առաջացման, նրանց գործառույթ-

ների վերանայման, համագործակցության անհրաժեշտության և այլ հարցերի: Ստեղծվել են սոցիալական միասնական ծառայությունը և դրա տարածքային կենտրոնները, որոնք իրականացնելու են ընտանիքի սոցիալական գնահատումը, ինչը հաշվի է առնվելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելիս: Երեխայի սոցիալական պաշտպանության և հիմնարար իրավունքների իրացումը պետք է հանդիսանա պետության առաջնահերթ խնդիրներից մեկը: Ուստի երկրի խաղաղության և երեխայի կյանքի անվտանգության գերակայության, սոցիալական բարեկեցության, երեխայի լավագույն շահի առաջնահերթության ապահովումը պահանջում է պետական հստակ քաղաքականություն և սոցիալական ու իրավական կարգավորումներ:

Հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում հետպատերազմյան շրջանում երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության հիմնախնդրի վերհանումն ու ուսումնասիրումն է:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հիմնախնդրի ուսումնասիրման ու վերլուծության համար հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, միջազգային իրավական ակտերն ու նորմատիվ իրավական այլ փաստաթղթեր, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Փաստահավաք աշխատանքներ» զեկույցը (2023 թ. սեպտեմբեր):

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծության ենթարկել ՀՀ հետպատերազմյան շրջանում երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության հիմնախնդիրը՝ հիմք ընդունելով միջազգային ակտերն ու ՀՀ նորմատիվ իրավական փաստաթղթերը:

Նորույթը: Հիմնախնդրով պայմանավորված՝ նորովի է դիտարկվել և մեկնաբանվել երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում հետպատերազմյան շրջանում՝ ներկայացնելով առկա խոչընդոտներն ու ռիսկերը, ինչպես նաև կարգավորման ուղիներն ու ձևերը:

Հիմնական նյութի շարադրանքը: Պետությունն առաջնորդվում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, իրավունքների պաշտպանության, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, հայրենասիրության, անձի ձևավորման ու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներ՝ ապահովելով երեխայի լավագույն շահը:

Երեխան գտնվում է հասարակության և պետության հոգածության ու պաշտպանության ներքո: Երեխայի իրավունքների պաշտպանության առաջնային պատասխանատուները նրա ծնողներն են, որոնք ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ երեխայի պաշտպանության հարցերում (ՀՀ Սահմանադրություն, 1995 թ. հուլիսի 5) [1, հ.32] Սակայն առանց պետության հովանավորության ընտանիքն ի զօրու չէ լիարժեք ապահովել երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանությունը: Ներկայումս բոլոր երկրներում այս հարցը արդիական է, և բոլորը ձգտում են ուժեղացնել երեխաների սոցիալական պաշտպանության ազգային համակարգերը, հատկապես երեխային ընտանիքից բաժանումը կանխելու, արդարադատության հասանելիությունն ապահովելու և բռնությունից, չարաշահումից ու շահագործումից պաշտպանելու ոլորտներում: Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքներն ու սոցիալական պաշտպանությունը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, նորմատիվ իրավական ակտերով:

Պետությունը կազմակերպում է երեխայի իրավունքների իրացման երաշխավորումն ու պաշտպանությունը՝ համագործակցելով երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց, իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպությունների հետ:

Այսօր սոցիալական պաշտպանության կարիք ունեցող երեխաների թվին են դասվում՝

- ✓ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները,
- ✓ սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքների երեխաները,
- ✓ խնամատար ընտանիքների երեխաները,
- ✓ սահմանափակ կարողություններով երեխաները,
- ✓ զինված հակամարտությունների, բնապահպանական և տեխնածին աղետների ենթարկված երեխաները,
- ✓ փախստականների ու միգրանտների ընտանիքների երեխաները,
- ✓ վարքային շեղում ունեցող և մարգինալ խմբում հայտնված երեխաները, որոնք ունեն ընտանիքի, դպրոցի, սոցիալական աշխատանքի հատուկ ծառայությունների (ստացիոնար հաստատություններ, Երեխաների աջակցության և խնամքի կենտրոններ, մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ), մանկավարժական աջակցության, խորհրդատվական և վերականգնողական ծառայությունների մասնագիտացված կենտրոնների աջակցության կարիք:

Երեխաների սոցիալական պաշտպանության և սոցիալական գիտակցության վրա ազդող գործոնների շրջանակն ընդգրկուն է և բազմաշերտ՝ ներառելով ինչպես երկրի սոցիալ-տնտեսական պայմանները, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված իրավիճակները, այնպես էլ երեխաների սոցիալական տարբեր կարգավիճակները, ֆիզիկական ու մտավոր անհավասար հնարավորությունները, օտարածին մշակութային բարքերը, ժամանակակից հասարակության պատրաստվածության աստիճանը, գիտելիքների մակարդակը, կարծրատիպային մոտեցումները և այլն:

Երեխաների սոցիալական պաշտպանության և արդարության հիմնախնդիրը արդիական է բոլոր ժամանակներում: Մինչդեռ արդի ժամանակաշրջանում ողջ աշխարհում, ի մասնավորի մեր երկրում, ականատես ենք լինում երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանության խաթարման բազում դեպքերի և իրադարձությունների, որոնք ուղղակիորեն ազդում են երեխայի անձի ձևավորման, զարգացման ու սոցիալականացման գործընթացի վրա:

Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Միությունից ժառանգեց երեխաների խնամքի և պաշտպանության համակարգ, որով երեխաները ստանում էին անվճար կրթություն, պոլիկլինիկական, ստացիոնար և առողջարանային բուժում, նպաստ, կրթաթոշակ և այլն: Անկախացումից հետո համակարգը, օբյեկտիվ պատճառներով պայմանավորված, կրեց որոշակի փոփոխություններ: Նկատի ունենալով այդ փոփոխությունների ծավալները, բնույթն ու ուղղվածությունը՝ ՀՀ-ում երեխաների սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Ընդ որում՝ երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանության փուլային համակարգի նման կարգավորման համար հիմք են ծառայում միջազգային փորձի այնպիսի օրինակներ, ինչպիսիք են

Շվեդիայի [9] և Չեխիայի [10] փորձը, ինչպես նաև հետխորհրդային մի շարք երկրների, այդ թվում՝ Էստոնիայի [11], Լիտվայի [12] փորձը, որոնք ունեն ՀՀ-ի հետ պատմական նույն ակունքները:

Վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ երեխաների պաշտպանությունն իրականացվում է հիմնականում նույն տրամաբանությամբ, և համակարգն ընդգրկում է հետևյալ մարմինները.

- կառավարությունը, որի խնդիրն է մշակել երեխաների պաշտպանության օրենսդրական նախագծեր ու ազգային ռազմավարություններ:
- սոցիալական հարցերի (կամ՝ զբաղվածության/սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարությունը,
- արդարադատության նախարարությունը,
- կրթության և գիտության նախարարությունը,
- առողջապահության նախարարությունը,
- երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող հատուկ խորհուրդը կամ հանձնաժողովը, որի գործունեության հիմնական նպատակներն են իշխանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց համագործակցության ապահովումն ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, երեխայի պաշտպանության համակարգի կազմակերպումն ու համակարգումը, երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության բնագավառում օրենսդրության կենսագործումը:

1. Առաջին փուլ (1991-1995 թթ.)՝ երկրաշարժի հետևանքներ, տնտեսության շեշտակի անկում, Արցախյան պատերազմ, երբ դեռ վաղ է խոսել երեխայի սոցիալական և իրավական պաշտպանության ամբողջական համակարգի կամ միասնական պետական քաղաքականության մասին: Այս փուլում կատարվում էին առաջին քայլերը միջազգային փաստաթղթերի վավերացման [7], երեխաների հիմնահարցերով զբաղվող կառույցի ստեղծման [8] ուղղությամբ և այլն:

2. Երկրորդ փուլ (1996-2003 թթ.)՝ նորաստեղծ, նորանկախ պետության աստիճանական կայունացում, ենթաօրենսդրական դաշտից դեպի օրենսդրական դաշտի անցում, երբ երեխաների խնամքի ու պաշտպանության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղվեց այս բնագավառի օրենսդրական կարգավորմանն ու օրենքով սահմանված իրավունքների արդյունավետ իրացումը երաշխավորող մեխանիզմների ու ինստիտուցիոնալ ենթահամակարգերի ստեղծմանը [6]: ՄԱԿ-ի հռչակագրով ամրագրված է, որ երեխայի սոցիալական պաշտպանության խնդիրը առաջնային է և ունի ռազմավարական նշանակություն: Իսկ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքում նշվում է՝

- ✓ ռազմական գործողությունների, այլ ընդհարումների, տարերային կամ տեխնածին աղետների կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական, տեղահանված կամ ապաստան հայցող երեխան ունի պաշտպանության իրավունք (հոդված 34),
- ✓ պետությունն ու նրա մարմիններն ու կազմակերպություններն ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանվածությունը՝ հոգալով նրա առաջնահերթ կարիքները (հոդված 34),
- ✓ երեխայի անհրաժեշտ նվազագույն կենսապայմանների ապահովումն ենթադրում է սննդի, խմելու ջրի, էկոլոգիապես մաքուր կենսամիջավայրի, կացարա-

նի, հագուստի, կոշիկի տրամադրում ու առաջնային բժշկական օգնության հասանելիություն՝ երեխայի հատուկ կարիքների հաշվառմամբ (հոդված 10)[2]:

3. Երրորդ փուլը (2004-2013 թթ.) սկզբնավորվեց անկախացումից հետո առաջին՝ երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ռազմավարական ծրագրի ընդունմամբ, ինչով էլ նախանշվեցին ՀՀ-ում երեխաների նկատմամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, պետական կառավարման համակարգում ներդրվեց երեխայի իրավունքների և սոցիալական պաշտպանության եռաստիճան համակարգը, կատարվեցին երեխաների սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային իրավունքների երաշխավորմանն ուղղված օրենսդրական կարևոր բարեփոխումներ, իրականացվեցին երեխաների սոցիալական պաշտպանության և իրավունքներին առնչվող տարբեր հիմնախնդիրներին վերաբերող մի շարք կարևոր ծրագրեր [5]: Այս փուլում նախանշված ուղղություններով աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

4. Եվ, վերջապես, չորրորդ փուլը (2014-2023 թթ.) լի է ինչպես հիմնախնդրի վերաբերյալ ձեռքբերումներով, այնպես էլ բազում խնդիրներով և երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանությանը վերաբերող ակնառու բացթողումներով ու խաթարումներով: Վերջիններս պայմանավորված են ինչպես երկրի սոցիալ-տնտեսական պայմաններով, այնպես էլ վերջին տարիներին մեր երկրում պատերազմական շարունակական իրադրություններով ու գործողություններով, որոնք ուղղակիորեն առնչվել են երեխաների սոցիալական պաշտպանության խնդրի խախտման դեպքերին:

Ճակատագրի բերումով 21-րդ դարը հայ ազգի համար նշանավորվեց ոչ միայն որպես նորանկախ պետության ձևավորման, այլև շարունակական պատերազմների բովով անցած ժամանակաշրջան: Հայաստանի նորագույն պատմության ընթացքում պատերազմների հետևանքով եղել են հայրենադարձության տարերային ալիքներ և՛ առաջին փուլում՝ պայմանավորված 1988-1991 թթ. զանգվածային ներհոսքով, և՛ երկրորդ փուլում՝ պայմանավորված 2003 թ. սիրիահայության, իրաքահայության մեծածավալ ներհոսքով: Սակայն ամենազանգվածայինն ու աննախադեպը 2020-2023 թթ. արցախահայության պարտադրված արտագաղթն էր, որի ժամանակ զանգվածային ներգաղթի պայմաններում ամենախոցելի խավը կանայք ու երեխաներն էին: Խաթարվել էին հազարավոր երեխաների սոցիալական պաշտպանության՝ կյանքի, կրթության, առողջության, բնակության վայրի, ազատ տեղաշարժման իրավունքները: Դա է փաստում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Փաստահավաք աշխատանքներ» զեկույցը (2023 թ. սեպտեմբեր), որում առավել հանգամանորեն ներկայացվում են պատերազմի և հետպատերազմյան շրջանում երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության ոտնահարման փաստերը, նրանց նկատմամբ թշնամու կողմից իրականացված բռնությունների, ոճրագործությունների դեպքերը [3] (ըստ նշված զեկույցի տվյալների՝ ոտնահարվել է 30.000 հայ երեխայի իրավունք, որոնք բռնի տեղահանվել են, մնացել են անօթևան, առանց սննդի և կենսական պայմանների: Առևանգվել են մինչև 14 տարեկան տղա երեխաներ, կան մահացության դեպքեր՝ 5 երեխա):

Թեպետ թե՛ տեղի հայությունը և թե՛ ներգաղթյալները միևնույն՝ հայկական քաղաքակրթության կրողներն էին, ունեին հային բնորոշ միևնույն հոգեկերտվածքն ու արժեհամակարգը [4,11], այնուհանդերձ կային սոցիալ-տնտեսական, ֆինանսական, կենցաղային խնդիրներ, որոնք անհրաժեշտ էր հաղթահարել գործնական քայլերի իրականացման արդյունքում: Նման պայմաններում երեխաների մոտ կարող են փոխվել աշ-

խարհընկալումը, շրջապատի նկատմամբ հուսալիությունն ու հավատը: Նմանատիպ զգացումները կարող են հանգեցնել՝

- վարքային կտրուկ փոփոխությունների,
- ապագայի նկատմամբ ընկալման կորստի,
- չարդարացված ռիսկի դիմելուն,
- վատ հիշողություններից չկտրվելուն,
- ուսման նկատմամբ անտարբերության,
- առողջական խնդիրների առկայության և այլն:

Թեպետ անժխտելի է թե՛ պետության, և թե՛ հասարակության կողմից բարեգործական ծրագրերի, աջակցության տարբեր ձևերի ու ուղիների կազմակերպումը, սակայն խնդիրն առկա է, անելիքները՝ շատ: Այսօր զինված հակամարտություններից տուժած մեր երեխաների պաշտպանության հարցը լուրջ մտահոգությունների տեղիք է տվել: Որչափ էլ պետությունը իրավաբանորեն փորձում է խնդիրը կարգավորել, որպեսզի նվազագույնի հասցվեն այն ռիսկերը, որոնք առկա են երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության գործում, այնուհանդերձ դժվարություններն ու բացթողումները շատ են, իսկ լուծման ուղիները՝ դեռևս անորոշ:

Թվում է, թե բոլոր կարևոր հարցերն արտացոլված են իրավական փաստաթղթերում, սակայն զինված հակամարտության ժամանակ մեր երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության խախտումների մեծ մասը կարող էր կանխվել կամ մեղմվել, եթե առկա կանոնակարգերը իրականում բոլոր իրավիճակներում հարգվեին ու կիրառվեին: Սակայն, ինչպես ցույց տվեցին վերջին տարիների դեպքերը, մեր երկրի կողմից ձեռնարկված գործնական միջոցառումներն այդքան էլ արդյունավետ չէին, իսկ երեխայի սոցիալական պաշտպանությանն առնչվող ու միջազգային նորմերում ամրագրված շատ դրույթներ այդպես էլ մնացին թղթի վրա:

Մինչդեռ միջազգային մարդասիրական իրավունքը երեխաներին ապահովում է համապարփակ պաշտպանություն: Զինված կոնֆլիկտի դեպքում, լինի դա միջազգային, թե ազգային, երեխաներն օգտվում են ռազմական գործողություններին չմասնակցող քաղաքացիական անձանց ընդհանուր պաշտպանությունից: «Պետությունն ու նրա մարմիններն ու կազմակերպությունները… ցուցաբերում են նյութական, բժշկական, հոգեբանական և այլ օգնություն, անհրաժեշտության դեպքում նրան տեղավորում են բուժական հաստատություններում կամ կազմակերպում երեխայի այլընտրանքային խնամքը և ինտեգրումը հասարակությունում» (հոդված 36): Երեխաների նկատմամբ երաշխավորվում է մարդասիրական վերաբերմունք, և ենթարկվում են ռազմական գործողությունների իրականացմանն առնչվող իրավական կանոններին: Դա են վկայում 1949 թ. Ժնևի երրորդ ու չորրորդ կոնվենցիաները, 1977 թ. նրանց լրացուցիչ արձանագրությունները, «Երեխայի իրավունքների մասին» 1989 թ. կոնվենցիան և այդ կոնվենցիայի 2000 թ. կամընտիր արձանագրությունը, որոնք սահմանում են հստակ կանոններ՝ հատուկ պաշտպանությամբ: Անկախ երկրում տիրող ոչ բարենպաստ պայմաններից՝ պետությունն ու բարեգործական հասարակական կազմակերպությունները հնարավորինս պետք է փորձեն աջակցել ու կարգավորել հասարակության ամենախոցելի շերտի՝ երեխաների, կեցության, կրթության, առողջության, սոցիալական և իրավական պաշտպանության հարցերը: Ավելին՝ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ում ամրագրված է, որ «արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ է ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու…, ինչպես նաև բժշկական անհրաժեշտ

օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար» [2]: Բնականաբար, առաջանում են հետևյալ հարցերը.

- ինչպե՞ս պաշտպանել երեխաներին այնպիսի իրավիճակներում, որոնցում մենք՝ չափահասներս, դժվարությամբ ենք մեզ կառավարում,
- ինչպե՞ս օգնել երեխային հաղթահարել հետպատերազմյան հոգետրավմայի հետևանքները:

1. Առաջին հերթին երեխայի համար կարևոր է անվտանգ ու ապահով միջավայրի առկայությունը, ուր երեխան իրեն կզգա հնարավորիս պաշտպանված: Վերջինս նախևառաջ ենթադրում է երկրում խաղաղության ապահովում՝ որպես երեխայի սոցիալական ու իրավական ապահովության երաշխիք:

2. Անհրաժեշտ է շահագրգիռ մարմինների՝ խնդրին ընդառաջ գնալու ու նախաձեռնողականություն դրսևորելու պատրաստակամություն: Ըստ վիճակագրական տվյալների («Հայացք» վերլուծական կենտրոն)՝ մեր երկիրը հնարավորության սահմաններում փորձում է ապահովել բոլոր երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանությունը՝ կարգավորելով նրանց անվտանգության, կեցության, կրթության, առողջության պահպանման խնդիրները:

3. Կարևոր է նաև սոցիալական տարբեր ինստիտուտների առողջ համագործակցությունը խնդրի կարգավորման գործում՝ սկսած «ընտանիք», «դպրոց» սոցիալական ինստիտուտներից, ներառյալ Երեխայի խնամքի և աջակցության կենտրոններ, խնամակալության ինստիտուտներ, դատական մարմիններ և այլն: Կստահության ձեռքբերման արդյունքում են հնարավոր մասնագետների (սոցիալական մանկավարժ, հոգեբան, բժիշկ, վերապատրաստված ուսուցիչ), ըստ երեխաների կարիքների իրականացվող հոգեվերականգնողական աշխատանքները, սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը, ինչպես նաև երեխայի անձնական ու հուզական հասունությանն ուղղված անհատական և խմբային տարաբնույթ աշխատանքները: Նրանց խնդիրն է օգնել, աջակցել երեխաներին կյանքի այս դժվարին փուլում, հավատ ներշնչել սեփական ուժերի, դրական տրամադրվածություն ապագայի նկատմամբ: Միայն այսպես է հնարավոր պաշտպանել երեխային կյանքի դժվարին իրավիճակներում, հաղթահարել խնդիրները, որոնք խանգարում են նրա զարգացմանը, լիարժեք սոցիալականացմանը, սոցիալական բարեկեցությանը: Նմանատիպ միջոցառումների համալիրը կարող է նպաստել երեխայի դրական վերաբերմունքի, հարմարման հմտությունների ձևավորմանը, երեխայի՝ նոր միջավայրում ինտեգրմանը:

Եզրակացություն: Հայ ազգն իր գոյության ակունքներից ի վեր միշտ ունեցել է պետականություն, իսկ դրա բացակայության պարագայում երբեք բաց չի թողել պատմական հնարավորությունը՝ կրկին ձեռք բերելու համար, անգամ, եթե դա զուգորդվել է թանկ կորուստներով: Երեխան հայի համար միշտ եղել է բարձրագույն արժեք, որի պաշտպանության, առողջության, անվտանգության ապահովման խնդիրը եղել է գերակա բոլոր ժամանակների ընթացքում: Ուստի երեխայասեր, պետականաշեն, ստեղծարար, հումանիստական հատկանիշները հայ ազգին որակող բազմաթիվ որակներից են, ու մենք միշտ եղել ենք, կանք, կմնանք որպես սեփական ճակատագիրը ինքնակամ տնօրինելու կամք ունեցող ազգ:

THE PROBLEM OF SOCIAL PROTECTION OF CHILDREN IN THE POST-WAR PERIOD

Ashikyan Armenuhi
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia
armine_ashikian@yahoo.com

Summary

The implementation of social and legal protection of children in the Republic of Armenia has undergone significant improvements over the past decade, but they are still incomplete and require flexible solutions and regulation. Structural and substantive changes were made to the social and legal protection of the child, which led to the emergence of new entities, a revision of their functions, the need for cooperation and other issues. A unified social service and its territorial centers have been created, which will carry out a social assessment of the family, which will be taken into account when organizing the care and upbringing of a child in a difficult life situation. The implementation of social protection and fundamental rights of the child should be one of the priorities of the State. Consequently, ensuring the priority of peace in the country and the safety of the child's life, social well-being, and the best interests of the child requires a clear State policy and social and legal norms.

***Keywords**: social protection of children, legislative framework, child care and protection centers, a child in an emergency situation, mass displacement, forced emigration, social security, difficult life situation.*

ПРОБЛЕМА СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ ДЕТЕЙ В ПОСЛЕВОЕННЫЙ ПЕРИОД

Ашикян Арменуи
Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
armine_ashikian@yahoo.com

Аннотация

Реализация социальной и правовой защиты детей в Республике Армения за последнее десятилетие претерпела значительные улучшения, но она все еще неполная и требует гибких решений и регулирования. За этот период были внесены структурные и содержательные изменения в программу социальной и правовой защиты ребенка, что привело к появлению новых субъектов, пересмотру их функций, необходимости сотрудничества и решению других вопросов. Создана единая социальная служба и ее территориальные центры, которые будут осуществлять социальную оценку семьи, что будет учитываться при организации ухода и воспитания ребенка, оказавшегося в трудной жизненной ситуации. Реализация социальной защиты и основных прав ребенка должна быть одной из приоритетных задач государства. Следовательно, обеспечение приоритета мира в стране и безопасности жизни ребенка, социального благополучия, интересов ребенка требует четкой государственной политики и социальных и правовых норм.

***Ключевые слова:** социальная защита детей, законодательная база, центры по уходу и защите детей, ребенок, оказавшийся в чрезвычайной ситуации, массовое перемещение, вынужденная эмиграция, социальное обеспечение, трудная жизненная ситуация.*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ., հուլիսի 5, հոդված 32:

2. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996 թ., հոդված 34:

3. THE HUMAN RIGHTS DEFEDER OF THE REPUBLIC OF ARMENIA, PRELIMINARY AD HOC REPORT ON RESULTS OF FACT-FINDING MISSIONS, CONDUCTED FROM SET. 24 to SEP.30, 2023.

4. Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պատերազմի բացասական հետևանքները և դրանց չեզոքացման միջոցառումների բովանդակությունը// «Գիտական Արցախ», 2021, h. 4, էջ 11:

5. 2005 թ. ընդունվեցին երեխաների իրավունքներին սերտորեն առնչվող «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին», «Կրթության առանձնահատուկ պայման-

ների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքները, վավերացվեցին «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» և զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող» կամընտիր արձանագրությունները, ինչպես նաև «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիան, 2006 թ. ՀՀ-ն վավերացրեց «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիան՝ կից հայտարարություններով, ինչպես նաև «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» կոնվենցիան, հաստատեց «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թթ. ռազմավարությունը», 2009 թ. ՀՀ Կառավարությունը հավանության է արժանացրել ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, 2012 թ. հաստատել է «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը» և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը:

6. 1996 թ. ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքները, 1998 թ.՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, 2002 թ.՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 2003 թ.՝ ՀՀ քրեական օրենսգիրքը

7. 1992 թ. ՀՀ-ը միացավ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային:

8. 1993 թ. ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կենտրոնական աշխատակազմում ստեղծվեց ընտանիքի խնդիրներով զբաղվող բաժին:

9. Շվեդիայի կառավարության կայք, https://www.government.se/articles/2018/04/questions-and-answers-about-incorporating-un-convention-on-the-rights-of-the-child-into-swedish-law/:

10. Չեխիայի աշխատանքի և սոցիալական գործերի նախարարության կայք, https://www.mpsv.cz/web/en/system-of-social-and-legal-protection-of-children-in-the-czech-republic:

11. Էստոնիայի սոցիալական ապահովության խորհուրդ, https://www.sotsiaalkindlustusamet.ee/en/family-and-child-protection/child-protection#Child%20Protection%20Department:

12. Լիտվայի երեխայի իրավունքների պաշտպանության և որդեգրման ծառայություն՝ https://vaikoteises.lt/protection-of-children/the-lithuanian-child-rights-protection-system-/:

Получено: 15.04.2024 *Received: 15.04.2024*
Рассмотрено: 26.04.2024 *Reviewed: 26.04.2024*
Принято: 29.04.2024 *Accepted: 29.04.2024*

© The Author(s) 2024

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License